

գրէ. «Տեղեկութիւնք ի վերայ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Կ. Պօլսոյ ի թաղն Խուժմարու, որ գտաք ժամանակագրէ ումեմէ բանասիրէ գրեալ, 1610 թվ. փրկչին, Խուլ Յօնաննէս Պատրիարքին եւ Սուլթան Ահմէտին օրովը 40 օրվան մէջը մատուոյ մը շինեցին՝ ուր տեղ որ յառաջ հոռմի գերեզման է եղեր. եւ 35 տարի անցնելէն ետքը էրէր է . . . :» Ինքն է ուրեմն այսօրուան Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ հիմնադիրը:

Յովհ. Խուլ վախճանած է ի Հուով 80 ամեայ, 13 Յունիս 1634ին, եւ Հայ կաթողիկեայց Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցւոյ մէջտեղը թաղուած է: Վրան դրուած է հետեւեալ հայ-լատին տապանագիրը, որ ցայսօր կը կենայ, թէպէտ բաւական մաշած.

Ի ՆԵՐՔՈՅ ՅԱՅՍԸՄ ՎԻՄԻ
ԵԴԵԱԼ ՄԱՐՄԻՆ ՅՈՎԱՆՆԷՍԻ
ՀՈՎԻԻ ՀԱՅՐ ԵՒ ԱՌԱՆԴԻ՜
ԵՐԱՆԵԼԻ ՔԱՒ ԵՒ ՀՌԵՏՈՐԻ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՄԵԾ ՔԱՂԱՔԻ ՍՏԱՄՊՈԼԻ
ՅԱՂԹՈՂ ԵՒ ԶՈՐ (՝) ՊԱՏՐԻԱՐԿԻ
ԱՆՅԵԱԼ ԱՒՈՒՐԲ ՌԹՍՈՒՆ ԱՄԻ

1 Ունիմ երկու զատ անձինքներէ ընդօրինակուած ընագիրներ, երկուքին մէջ ալ այս ինչ անմեկնելի ընթերցուածը կայ: Անտարակոյս կարդալու է «առաջնորդի», վերջին տառերը փակագրութիւն մ'ենթադրելով: Լատիններէնն ասոր համապատասխանող տեղն ունի «Ուսուցիչ» «վարդապետ»: